ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2014թ. մայիսի 29-ի N ՏԿՆ-ԲԸԾՁԲ-14/1ԱԵ-7 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ՏԿՆ-ԲԸԾՁԲ-14/1ԱԵ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության **«**Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ**»** պետական հիմնարկի, որը գտնվում է ք.Երևան, Նալբանդյան 28, 3-րդ հարկ 307 հասցեում, ստորև ներկայացնում է N ՏԿՆ-ԲԸԾՁԲ-14/1ԱԵ ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվությունը:

Գնահատող հանձնաժողովի 2014թ. մայիսի 29-ի N ՏԿՆ-ԲԸԾՁԲ-14/1ԱԵ-7 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Գնման առարկա է հանդիսանում. **Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար աուդիտորական ծառայությունները (կոնցեսիոներ՝ <<Հարավկովկասյան երկաթուղի>> փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական և տեխնիկական աուդիտ).**

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել «Հ»/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել «Հ»/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1	<<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ		Հ	<<Մասնագիտական փորձառություն>> չափանիշի գնահատման նպատակով ներկայացված հայտարարությունը (հավելված 3.2) չի համապատասխանում ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 81-րդ կետով և սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, քանի որ համաձայն հրավերի <<մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից>>, սակայն

				համաձայն <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշի գնահատման նպատակով ներկայացված հայտարարության՝ մասնակիցը պատշաճ ձևով իրականացրել է համանման ծառայություններ, որոնց հանրագումարը պակաս է ընկերության կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:
2	<<ՍՕՍ-Աուդիտ>> ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել «X»/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**
1	<<ՍՕՍ-Աուդիտ>> ՍՊԸ	X	33350000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների համաձայն՝ անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հ. Օրդուխանյանին:

Հեռախոս՝ 010-580523:

Էլ. փոստ՝ hordukhanyan@transportpiu.am:

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ